

**ԱՎ. ԻՍԱԳԱԿՅԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԻ ՉՓՈՒՇՈՅԻ ԼԵՋԿԻ
ՉՈՒՈՎԱՍԱՆ ԱՌԱՆՁՆԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Մ. Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Լեզվաոճական առումով Ավ. Իսահակյանի ստեղծագործության առաջին շրջանը ընդգրկում է 1891 թ. մինչև 1909-10 թթ.՝ Այդ տարիներին լույս են տեսնում բանաստեղծի մի շարք ժողովածուներ, որոնցում գերակշռողը ժողովրդաբարբառային լեզուն է, որով էլ մեծ չափով պայմանավորված է Իսահակյանի վաղ քնարի ժողովրդայնությունը:

Նրա ստեղծագործությանը ժողովրդայնություն տվող բազմաթիվ ու բազմապիսի միջոցների մեջ զգալի տեղ ունի հոլովական ձևերի կիրառությունը: Խոսակցական-բարբառային հոլովական ձևերը գործածման հաճախականությամբ գիշում են միայն բայական ձևերին: Իսահակյանի ստեղծագործության առաջին շրջանի չափածոյի լեզվի հոլովման համակարգի ընդգծված բարբառայնությունը արտահայտվում է անգամ բառերի ուղղական հոլովաձևերում: Իսահակյանի մայրենի խոսվածքի համար բնորոշ է, որ երբ *ա* ձայնավորով վերջացող գոյականները որոշյալ առումով են գործածվում, բառավերջի *ա* ձայնավորը հնչյունափոխվում է *ե-ի* (*ճամփա-ճամփեն, սավղա-սավղեն, տղա-տղեն, բալա-բալեն, յարա-յարեն*): Բերենք համապատասխան օրինակներ «Երգեր ու վերքեր» ժողովածուի 1898 և 1908 թթ. հրատարակություններից՝.

1898

Էս *ճամփեն* ոլո՛ր-մոլո՛ր
Սև ծովի բոլոր կերթա (53):
Սրտիս *սավղեն*, խորունկ *յարեն*
Անդեղ թողեց ու գնաց (61):
Երնեկ մեռնիմ, դարդից պրծնիմ,
Սիրոսս ուտեն *գելերը* (63):

1908

Էս սարի սիրուն *լալեն*
Եղնիկ, ասա, ո՞ւր է, չկա (103):
Ա՛խ, մենք նստանք քարի *վրեն* (111):
Ա՛խ, մուծն առավ իմ *ճամփեն* (172):
Վա՛խ էն *տղեն* սև ձիավոր
Ջարկեց, տարավ Շուշանիս (173):

Ներկայացված օրինակները հիմնականում «Դատարկյուն աշուղի խաղեր» շարքից են: Խորագրից կարելի է եզրակացնել, որ լեզվական ձևերը համահունչ են ասելիքին: Օրինակներում բերված հոգնակի *գելերը* ձևը կառուցվածքով տարբերվում է մյուսներից. բարբառում *գալլ* բառի ուղիղ ձևն է *գել*:

Շիրակի խոսվածքին հատուկ է հոգնակիի կազմության ք-ով ձևը, հատկապես *ի-ով* և *ա-ով* վերջացող բազմավանկ բառերում. օրինակ՝ *Էս իմ բարդիքն են, անուշ կխշշան* (1908, 127), *Մենակ բալեքդ արուն ծովի մեջ* (1908, 137):

Հետաքրքիր է կրկնակի հոգնակիի գործածության մեկ-երկու դեպք հովվերգական շնչով գրված գողտրիկ մի բանաստեղծության մեջ. որտեղ այդ ձևերը ստեղծում են ժամանակի ու տարածության անվերջության պատրանք.

Սիրոսս կուզե հեռուները սավառնել,
Նոր *ճամփեքներ*, նոր աշխարհներ թափառել,
Արևն ելավ ոսկի *հուսքերն* ուտերին (1908, 181):

Բանաստեղծի լեզվի ընթացքին հետևելով ժողովածուից ժողովածու՝ առավել համոզվում են, որ հոլովաձևերի գործածության առումով զարգացման որևէ միտում չի

¹ Տե՛ս Ռ. Իշխանյան, Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն, Եր., 1978, էջ 282:

² Տե՛ս Ավ. Իսահակյան, Երգեր ու վերքեր. Ալեքսանդրապոլ, 1898, Հին ու նոր երգեր ու վերքերից, Բաքու, 1902, Բանաստեղծություններ, Բաքու, 1903, Երգեր ու վերքեր, Տփղիս, 1908: Այսուհետև այս գրքերից հղումները շարադրանքի մեջ՝ թիվը և էջը:

նկատվում, և լեզվական որակը պայմանավորված է բացառապես այն հույզով, որով հյուսվել է բանաստեղծությունը: Ռա կարելի է տեսնել 1898 և 1908 թթ. «Երգեր ու վերքերից» քաղված սեռական-տրական հոլովածների համեմատությունից: Հիմնականում նկատի ունենք գրական լեզվին հատուկ ի վերջավորության դիմաց ու-ի գործածությունը: Այսպես՝ *Յարաք չըլնի, անուշ հովեր, Յարս սիրու խոսք տվեց* (1898, 27), *Արշալույսի շողերու հետ ես քեզ տեսա, իմ ընկեր* (1898, 28), *Ու մեր սրտերն մենք գտանք Աստղերու պես անհայտ* (1898, 28), *Երկինք-գետինք գլխուս մթնան* (1898, 28), *Սիրոս բանամ դեմ գով-ծովուն, Վիշտս տանի հովը ծովուն* (1898, 33):

Բերենք 1908 թ. հրատարակությունից համապատասխան հոլովածներ. *Արևն իջավ սարի գլխուն* (1908, 168), *Երկինք-գետինք գլխուս մթնան* (1908, 122), *Ա՛խ, ես սիրո ճամփու ափին մեճակ բուսած վայրի վարդ եմ* (1908, 130), *Իսկ ես սիրո ծարավ եմ* (1908, 130):

Նկատենք, որ միևնույն բանաստեղծության մեջ գործածվում են *սեր* բառի և՛ բարբառային *սիրու* ձևը, և գրական *սիրո* ձևը: *Սիրո* ձևը ընդհանրապես գործածվում է և՛ ինքնուսունական, և՛ ինքնհարյուրական թվականների բանաստեղծություններում, բայց հիմնականում այնպիսի մնուշների մեջ, որոնք բարբառային լեզվի զգալի ազդեցություն չեն կրում, օրինակ՝

**Մի՞թե պիտի փոշի դառան
Այդ աչերը կենսավառ,
Ուր շողում են հույս ու տենչեր,
Սիրո աստղեր
Ինձ համար** (1908, 22):

Հաճախակի են բարբառին հատուկ *ս, դ* ստացական հոդի ուղեկցությամբ կազմված ձևերը՝ *Սիրոս երազը ողբամ ու երթամ* (1908, 23), *Սիրոս վառվավ սիրուդ բոցեմ* (1908, 26):

Մի երևույթ ևս շատ բնորոշ է Իսահակյանի մայրենի բարբառին: Ստացական հոդ ունեցող ձևի հետ կարող է գործածվել դերանունով արտահայտված հատկացուցիչ: Իսահակյանը այդպիսի ձևեր գործածել է և՛ բարբառային, և՛ ժողովրդախոսակցական լեզվով գրված բանաստեղծություններում՝ *Ա՛խ, իմ սիրոս վառ գարունը թոշնեցավ* (1908, 61): Այս ձևերի կողքին - ու հոլովիչով է կազմվել *առավոտ* բառի սեռական-տրականը.

**Եվ սքբում է առավոտու
Կույս արևը մազելի
Յուր ծամերով հեզ ուռենու
Արցունքները բյուրեղի** (1908, 64):

Նկատենք, որ նշված ձևը գրաբարյան է: Այսպիսի ձևեր մասամբ դեռ առկա են Իսահակյանի և՛ ինքնուսունական, և՛ ինքնհարյուրական թվականների չափածոյի լեզվում, չնայած նկարագրող հոետորական լեզվի տարրերը, գրքային-արհեստական ձևերը նկատելի չափով իրենց տեղը գիջել են կենդանի լեզվի տարրերին: Նաև կարևոր է նշել, որ տվյալ բանաստեղծության լեզվական մթնոլորտի համար բառաձևը բնորոշ է, ներդաշնակ և ավելի շատ գործածված հանգավորման նպատակով (*ուռենու*):

Նույն բացատրությունը, իհարկե, չենք կարող տալ *լուսնու* հոլովածի համար.

**Հուսնու բակը, ինչպես փրփուր
Թույլ ու թալուկ կշողա** (1908, 265):

Բանաստեղծության բանակարային փոքր-ինչ խորհրդավոր, անսովոր խորքի վրա տվյալ բառաձևը կարծես մեծացնում է տիեզերական հեռուների տպավորությունը: Հավանաբար նման դեպքերում է ակնբախ բառի բանաստեղծական արժեքը:

Բերենք ժամանակի իմաստ ունեցող բառերի սեռական-տրական հոլովի գործածության մեկ-երկու օրինակ.

Իմ գարունը վա, գառ գարունը վա վառ ծաղիկներս ո՞ւր գնացին (1908, 191):
**Օրս տրտում, սև է անցնում, հույսս է վաղվան օրվան վրա,
Վաղվան օրն էլ սև-ամպի պես եկավ, նստավ սրտիս վրա.
Հիմա դարձեր ափսոս կասեմ, անցած օրին երևեկ կուտամ** (1908, 194):

Ակներև է, որ իմաստային *վա* հոլովման սկզբունքը միևնույն բանաստեղծության մեջ պահպանված չէ: *Գարուն* բառի *գարունք* ձևի *գարունքվա* սեռական-տրականը օրինակաբար է *վա* հոլովման պատկանող բառերի շարքում: Ուշադրություն դարձնենք *վաղվան* և *օրվան* բառերի *վան* թեքույթով ձևերին: Կարճ բարբառի Օիրակի խոսվածքում այժմ հոլովական այդ վերջավորությունը առկա է *վա* ձևով (առանց վերջին *ն*-ի): Հավանաբար իսառնակյանի ստեղծագործության մեջ արտացոլվել է ավելի նախնական *վան* ձևը, որ հատուկ է եղել նաև միջին հայերենին: Իսկ վերջին՝ *օրին* տրականը *ի* հոլովմամբ գործածելն ավելի շատ իմաստային արժեք ունի. ասես ընդգծում է անցած օրերի գաղափարն ընդհանրապես, հոգնակիություն է նշանակում և ոչ թե նշում կոնկրետ օրը:

Չափածո խոսքում ոչ հաճախ, բայց հանդիպում է *ընկեր* բառի *ընկերի* սեռական-տրականը: Բարբառում այն ունի *ընկերոջ* (*հընկերոջ*) ձևը: Իսառնակյանի բանաստեղծական տողում այսպես է.

Ահագ որոնիր մի վեհ ընկերի,
Սիրի՛ր, բայց սիրուն մի լինիր գերի (1908, 223):

Թվում է, թե բանաստեղծն ընտրել է *ընկերի* հոլովածը, որ ապահովի հանգավորումը: Բայց արձակի լեզվում այս նույն հարցի մասին խոսելիս Հ. Մելքոնյանն իրավացիորեն վկայակոչում է Մ. Աբեղյանի կարծիքը, որը «Հայոց լեզվի տեսություն» աշխատության մեջ նշում է, թե «հնացած են այս ձևերը՝ ընկերոջ, աներոջ, տալոջ, սկեսրոջ, սովորական է ընկերի, աների, տալի, սկեսրի»: Ուրեմն միայն հանգավորման նպատակով չէ, որ իսառնակյանը գործածել է բառի *ի* հոլովիչով այսօր ոչ սովորական ձևը: Նաև լեզվի զարգացման այդ շրջանի համար դա սովորական է եղել:

Գլուխը խոսվածքում ուղղակիանում *ա*-ով վերջացող բառերը եզակի սեռական-տրականում կորցնում են *ա*-ն, այլև *ա*-ի հնչյունափոխություն է կատարվում բառամիջում: Այսպիսի տարրեր ևս խորթ չեն բանաստեղծի առաջին շրջանի չափածոյի լեզվին: Օրինակ՝

-Ա՛խ, էն իմ յարն է՝ սիրուն, քքչուն,
Ուրիշ տղի հետ պսակի կերթա (1908, 126):
Ա՛խ, շատ կլսես էս ձենը, մե՛ր ջան,
Բայց բալիդ ձենը էլ չես լսելու (1908, 127):
Ժակտիս աստղե-պսակ ունիմ (1908, 96):
Սարի մարմանդ հովն է շոյում
Ժակտի փունջը մարալիդ (1908, 179):

Ուրիշ է գիլու հոլովածը: Բարբառում բառն ունի *գել* ուղղակիանը, որը հնչյունափոխությամբ և սեռական-տրականում *ու* հոլովիչով ստանում է արտահայտված բարբառային ձև.

Թող սիրտս գիլու փայ-բածին դառնա,
Մե՛նակ թե մերս մախ չիմանա (1898, 66):

Չուտ բարբառային լեզվով գրված տվյալ բանաստեղծության մեջ բառաձևը խորթ չէ: Սակայն վերահրատարակության մեջ բանաստեղծական տողը փոփոխության է ենթարկվել՝ *Սիրտս գայլերին թող բածին դառնա*: Քննությունը ցույց է տալիս, որ կենդանի լեզվին հատուկ հոլովածների բազմազանությունը խիստ բնորոշ է իսառնակյանի լեզվին, քանի որ այդ շրջանում լեզվական որոշակի որակ, համակարգ ստեղծել նա չի կամեցել և չի ձգտել, այլ պարզապես ժողովրդի «երգերն ու վերքերը» գրի է առել ճիշտ այնպես, ինչպես լսել է: Եվ այդ բանավոր խոսքին հատուկ ձևերով էլ կազմել է հատուկ աճունների սեռական-տրականը: Բերենք մեկ-երկու օրինակ.

Բալի Մշու Սուլթան գորջով՝
Իմ մարալս տար ինձի, յա՛ր (1908, 178):

¹ Տե՛ս Հ. Մելքոնյան, Ավ. Իսառնակյանի գեղարվեստական արձակի լեզուն և ոճը, Եր., 1990, էջ 113:

² Ավ. Իսառնակյան, Երկեր չորս հատորով, հ. I, Եր., 1958, էջ 131:

Սիրտս նորեն կալեկոծվի

Հնդստանու ծովին նման (1908, 188):

Բոցիկու սարին սև ամպն է չոքեր,

Հովն է հեծեծում *Բասենա* դաշտում (1908, 153):

Թերևս այս հիշումները տվյալ տողում ոճական արժեք ունի. ի հիշովման պատկանող բառը *ա* հիշովիչով հիշովելը կարծես այնքան էլ բնորոշ չէ Իսահակյանի լեզվին, կարելի է առանձին դեպքեր միայն մատնանշել՝ *Դու նստել ես աղբրա-ակից* (1908, 100) (այս գործածությունը բարդ բառի (իսկական բարդության) արժեք ունի, թեև Իսահակյանը բառի գրությունը ներկայացնում է հարադրությունների պես):

Ուշագրավ են նաև *ք*-ով վերջացող մի քանի բառերի սեռական-տրական գրաբարատիպ հիշովման ձևերը, որոնք այս բարբառի լեզվամտածողության կայուն ձևեր են դարձել ժամանակի ընթացքում, օրինակ.

Երկնուց փերին - *Լուսնյակն* ելավ (1908, 199):

Ա՛խ էն սիրու աստղն էր պայծառ,

Սրտիս *երկնուց* վար ընկավ (1908, 103):

Նորից ծաղկեցին *աղբերաց-արուն* (1908, 114):

Էնոր *ոտաց* տակն է ընկնում (1908, 106):

Հիմկուց դեն պիտի պաշտեն

Վարդն ու աղջիկն ու գինին (1908, 171):

Նույնը չենք կարող ասել *պարտիզների* սեռական-տրականի մասին, ակնհայտ է, որ սա ժառանգորդական հնչյունափոխության դեպք է և ոչ հաճախ գործածվել է առաջին շրջանի չափածոյի լեզվում.

Սիրունները պարտիզների

Քնքուշ պահած վարդն են սիրում (1908, 130):

Ծիրակի խոսվածքում գրեթե բոլոր բառերի հոգնակի թեք հիշովները կազմվում են ու հիշովիչով: Կարելի է ասել, որ այս երևույթը ընդհանրապես բնորոշ է արևմտյան տարածքի բարբառների: Բանաստեղծի այս շրջանի գործերում բազմաթիվ են ու հիշովիչով հոգնակի սեռական-տրականի կազմության դեպքերը: Բերենք մի քանի օրինակ.

Խոր *խոցերուս* ճար չկա (1908, 60):

Ալազյազը *աստղերու* մեջ (1908, 96):

Ա՛խ, սիրտս մեռավ ծով *դարդերու* մեջ (1908, 120):

Հալավ բանձրիկ *սարերու* ձուն,

Ժամփա բացավ *դարիբներու* (1908, 165):

Յար, թե մեռնիմ *ոտներուդ* տակ

Շահին-շահի թախտ է ինձի (1908, 188):

Սակայն վերը նշված ձևերի հարևանությամբ նա գործածում է այնպիսի ձև, որը քննարկված բազմաթիվ դեպքերից և ոչ մեկին չի վերաբերում՝ *Հազար ափսոս ծաղկունանցքը, նազուկ լուսնին, - պիտի թոռմին* (1908, 196): Սա փաստորեն կազմվել է սպասելի *ծաղկունք-ծաղկանց* կանոնավոր ձևի փոխարեն և կարծես կրկնակի հոգնակի ձև է ներկայացնում, երբ սեռական-տրականում պահպանվել է ուղղականի ունք հոգնակերտի մի մասը:

Քանի որ Իսահակյանի մայրենի խոսվածքը արևմտյան բարբառներից մեկի տարբերակն է, ուստի հասկանալի է, որ ժողովրդաբարբառային ձևերի մեծագույն մասը արևմտյան բարբառախմբին հատուկ լեզվատարրեր են: Այդպես և բացառական հիշովի ձևերը, որոնք անհամեմատ մեծ թիվ են կազմում գրական հիշովածների համեմատությամբ, կազմված են *-ե (է)* հիշովակազմիչով՝ *-ն*, երբեմն՝ *-ս*, *-դ* հոդերի ուղեկցությամբ:

Բերենք օրինակներ՝ առանձնացված խոսքային միջավայրից. *այերեն, բոցեն, նորեն, ջրեն, սարեն, վաղուցվանեն, տեղերեն, օրերեն* (1898 թ.), *աշխարհեն, արտերեն, փերեն, գետեն, ծառերեն, ծմակեն, ծովեն, ձեռքես, միջեն, մտքեդ, յարես, վզեն, սրտես, քարփեն* և այլն (1908 թ.): Բանաստեղծական տողում հնչում են այսպես.

1898

Ու իմ սիրուս մրմուռըներեն
 Տխուր երգեր կհյուսեն (17):
 Հայրենհիքես հեռացեր են,
 Խեղճ պանդուխտ են, տուն չունիմ (24):
 Խաբրիկ կուզեն քարեն, քոյեն (25):
 Աղոթքանեն արև ցոլաց,
 Կապուտ սարեն հովն ընկավ (24):
 Մեզը մեկնավ գետեն գետին (44):

1908

Հազար ու մեկ ցավ են քաշեր,
 Քաշը ծանր էր աշխարհեն.
 Սիրուս թեկուզ սար-քար լիներ,
 Կենդիվեր մեջտեղեն:
 Հազար ու մեկ էն ցավերեն
 Մեկ ցավ մնաց սրտիս մեջ.
 - Ա՛խ, էն սիրուն, սև աչերեն
 Ջուլում ցավն է սրտիս մեջ... (83):

Իհարկե, բարբառից եկող բացառականի ձևերը գերակշիռ գործածություն ունեն, բայց կան նաև գրական արևելահայերենին հատուկ հոլովածի կիրառություններ, ինչպես.

Ազիզ մորիցս բաժանվեր են (1898, 20):
 ...Սարից կուգաք նիշուն հավքեր...
 Մովից կուգաք մարմանդ հովեր (1898, 20):

1908 թվականի «Երգեր ու վերքերում» փոփոխություն է կատարվում Տոգուտ բարբառի՝ ազիզ մորես, սարեն կուգաք, ծովեն կուգաք:

Հետևաբար չենք կարող ասել, թե ժողովածուից ժողովածու իսահակյանի քնարերգության լեզուն զարգանում է՝ բարբառից անցնելով գրական նորմավորված ձևերի: Պարզապես հույզը, ասելիքը պայմանավորում են լեզուն: Բավական է համեմատել վերոբերյալ երկու տարբերակները, որ համոզվենք, նաև նկատենք, որ երկրորդ տարբերակն ավելի սրտամոտ է, ժողովրդաշունչ:

1898 թ. ժողովածուում կիրառվել են նաև հետևյալ ձևերը՝ քնից կտրած (11), կյանքի անուշ հովերից (17), ուրտից սերդ կբխեն (25), այրից փշեց (28), ծաղկից ծաղիկ (33), ամենից շատ (46), կաթիլներից են (47), էնոնց հետքից (53), հպարտ սարից (42), խաբար առնիմ յարիցս (54), սիրո արևից (56), քո.շորթունքից (57), ինձնից (57), դարդից պրծնիմ (63):

«Բիճոյլ» բանաստեղծությունն ամբողջությամբ գրված է գրական լեզվով: Բանաստեղծության մեջ բացառական հոլովի վեց կիրառություն կա, բոլորն էլ գրական հայերենի ձևեր են: Այստեղ բացառականը գործածվում է նաև վերաբերության խնդրի պաշտոնով՝

Այնտեղ անտառը լիքը խշշում էր
 Հին-հին դարերի, դալար ազգերի
 Շքեղ անցքերից (1898, 42):

Այդպիսի կիրառությամբ «Նվեր ընկերիս» բանաստեղծության մեջ հանդես է գալիս բացառականի բարբառային ձևը. Մենք խոսեցինք հին օրերեն, մեր ճամփեքեն ու բախտեն (28): Ի դեպ, նշված բանաստեղծության մեջ գործածվել է վեց բարբառային հոլոված (որոնցից մեկը՝ հրարուց) և մեկ գրական՝ այրիից ձևը:

Առաջին ժողովածուում -ից-ով կազմված բացառականի բոլոր կիրառությունները վերևում բերվեցին: Բացի նշվածներից, կա ևս մեկ կիրառություն բարբառին հատուկ -ը/մ անորոշ հոդի ուղեկցությամբ. Բայքի դարիք ճամփորդիցս խաբար առնիմ յարիցս (1898, 54), որը 1908 թ. «Երգեր ու վերքերում» դարձել է՝ Բայքի դարիք մի ճամփորդից... (178):

Ընկեր, քույրիկ բառերի բացառականը կազմվել է ընկերես, քուրիկես ձևերով: Այդպես է նաև 1908 թ. «Երգեր ու վերքերում».

Անգուք կյանքում վերք ստացա
 Սրտանց սիրած ընկերես,
 Անխիղճ կյանքում վերք ստացա
 Անուշ սիրած քուրիկես (170):

Անշուշտ, «Երգեր ու վերքերի» երկրորդ հրատարակության մեջ ևս բազմաթիվ են բացառականի բարբառային ձևերի կիրառությունները - ե(ն) վերջավորությամբ, կան նաև ս, դ հոդերի ուղեկցությամբ կազմված ձևեր՝ Տարար գարունն իմ սրտես (49):

Եթե գործածության հաճախականության տեսակետից համեմատենք բացառականի բարբառային և գրական ձևերը, տարբերությունը զգալի չէ (բարբառային գործածության 28 դեպք կա), սակայն գրական արևելահայերենի ձևերը կենտրոնացած են հատկապես գրական լեզվով գրված մի բանաստեղծության մեջ, իսկ Օիրակի խոսվածքին հատուկ հոլովաձևերը սփռված են ամբողջ ժողովածուում:

Կան նաև բարբառին հատուկ հնչյունափոխությամբ ձևեր, որոնք համապատասխան բանաստեղծական տողերում արտահայտչական արժեք ունեն.

Խլել *բերնից* արնոտ հացը աղքատի (1908, 206):

Էս աղբյուրը գլզլալով

Քարփեն ծուփ-ծուփ կփովի (1908, 161):

Լալ *նարգրսից* հազար անգամ

Լալ շրթունքդ մեղր ունի (1908, 104):

Լուսնյակն ընկավ *երթըկից* նես (1908, 186):

Բացառականը տարբեր կիրառություններով Իսահակյանը գործածել է նաև այս ժողովածուում բաղդատության, պատճառի, սահմանափակման և վերաբերության իմաստներով.

Ա՛խ աշխարհում մարդկանց ձեռեն

Խաչեր շա՛տ են, շա՛տ տարեր (1908, 76):

Համ էլ սիրտս մեծ ցավ ունի...

Մեծ էս սարեն, խորն էս ձորեն (1908, 86):

Էնտաքքիր մեկ կիրառություն կա Օիրակի խոսվածքին խիստ հատուկ բացառականի կազմությամբ՝ *Բլբուլս ահուն թևերը թափեց* (147): Սա կարելի է դիտել որպես գրաբարյան *ու* հոլովման մնացուկային ձև բացառական հոլովում:

Բարբառին դարձյալ հատուկ մի ձև ևս վկայակոչենք՝ *Յար, աչերոս լուսը մարավ ջու կարտով-սիրով լալեն* (1908, 187): Են ձևով այս բացառականը իմաստով համապատասխանում է արդի հայերենի *-ուց* վերջավորությամբ բացառականին (անորոշ դերբայի դեպքում) և կիրառվում է որպես պատճառի պարագա:

Համեմատելով Իսահակյանի իննսուցական և իննհարյուրական թվականների բանաստեղծությունների լեզուն՝ հանգում ենք այն հետևության, որ Իսահակյանը ժողովրդական լեզվամտածողության տարրերը նույն հաճախականությամբ գործածել է իր ստեղծագործության առաջին շրջանի ամբողջ ընթացքում:

М. К. ХАЧАТРИАН - Особенности склонения в языке первого периода поэзии Аветика Исаакяна. - Язык поэзии Аветика Исаакяна первого периода (1891-1910 гг.) отличается выраженной народностью, что в немалой степени достигается использованием элементов родного ширакского диалекта автора. В системе склонения эти элементы в основном сводятся к оформлению именительного падежа в определенной форме, родительно-дательного падежа с окончанием на -նի (как в единственном, так и во множественном числе), отложительного падежа с окончанием на -ն, а также к некоторым особенностям использования определенно-притяжательных артиклей. Указанные особенности языка сохраняются в течение всего первого периода творчества Аветика Исаакяна.